ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 14.06.2019թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
(Ա. Սահակյան)

1. Մասնակցի՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
(Ա. Սահակյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ««Շինաշ-28» ՍՊԸ և «Նեմրութ» ՍՊԸ» Կոնսորցիումի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքի՝ մասնակցի ներկայացրած՝ սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետի ա) պարբերությամբ նախատեսված համանման (նմանատիպ) պայմանագրի (ծածկագիրը՝ ԲՄԱՇՁԲ-10/1-1) հաշիվ-ապրանքագրերի հանրագումարը պակաս է, քան տվյալ պայմանագրով սահմանված ընդհանուր գումարը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ 14.06.2019թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը՝ ««Շինաշ-28» ՍՊԸ և «Նեմրութ» ՍՊԸ» Կոնսորցիումին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, և 18.06.2019թ.-ին նիստը շարունակվել է:

05.06.2019թ.-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ ««Շինաշ-28» ՍՊԸ և «Նեմրութ» ՍՊԸ» Կոնսորցիումի մասնակիցները (անդամները) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններն («Նեմրութ» ՍՊԸ-ի մասով, որը ստանձնել էր այդ պարտավորությունը համատեղ գործունեության պայմանագրով) առկա են և բավարարում են հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:

1.2 18.06.2019թ.-ին, հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց ««Շինաշ-28» ՍՊԸ և «Նեմրութ» ՍՊԸ» Կոնսորցիումի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից:

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակցին՝ ««Շինաշ-28» ՍՊԸ և «Նեմրութ» ՍՊԸ» Կոնսորցիումին, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/5» ծածկագրով բաց մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ, քան գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Սաֆարյան
Գնումները համակարգող	Ա. Սահակյան